

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՄԱՐԴԻԿ ԻՐԱՐՈՒ ԱԶԱԿԻՑ

Ֆրանսայի մէջ դպրոցականները իրարու օգնելու համար, ամէն շաբթու տասը սու կը ձգեն դպրոցին հասարակաց սնտուկի մը մէջ։ Ասկէ յառաջ կուգայ մեծ դումար մը որ ամենուն կը վերաբերի։ Այդ աշակերտներէն մին եթէ հիւանդանայ, ի պահ դրուած այդ դրամէն մաս մը իբր փոխաստուղծիւն հիւանդին կը տրուի բժշկական դարմանումի և դեղի համար։

Դպրոցէն դուրս ալ ընկերութիւնը ունի իրերաօգնութեան այդ սկզբունքը։ Մարդիկ կ'ապրին և կը յառաջդիմեն շարունակ իրարու ծառայութիւններ փոխանակելով, իրարու աջակից և նեցուկ ըլլալով։ Առանց այդ աջակցութեան և իրերաօգնութեան թշուառութիւնը պիտի տիրապետէր տիեզերքի վրայ։

Իրերաօգնութեան սկզբունքին կիրարկումը կը տեսնուի ընտանիքի անդամներուն և քաղաքին ընտանիքներուն միջեւ պոզոտաներ, հանրային շէնքեր, զբօսավայրեր և այլն այդ սկզբունքին կիրարկումին արդիւնքն են։

Առնել և տալ հաւասարապէս սիրելի են ամենուս, հակառակ պարագային՝ շատ մը կենդանիներէն ալ վար պիտի ըլլայինք, մեղուներուն, մրջիւններուն և թռչուններուն չափ իսկ չպիտի ըլլայինք։ Անոնք զարմանալիօրէն իրարու կ'օգնեն։

Իրերաօգնութեան, իրարու աջակից և օգտակար ըլլալու ամենէն զօրաւոր միջոցն է պատրաստուիլ հետեւելու համար արհեստի մը։

Իրերաօգնութեան այդ սկզբունքին օգտակարութիւնը մատնանիչ ընելու համար շահեկանութենէ դուրկ չպիտի ըլլար եթէ ձեզ պատմեմ հետեւեալը։

Մըջիւն մը որ հոս հոն ժուռ կուգար պարէն փնտռելու, համբուն վրայ տեսաւ վարսակի հունտ մը՝ զոր վ'ուզէր փոխադրել, հունտը տակայն շատ խոշոր էր եւ ինք անգոր ու տկար։ Խճաքարի մը վրայ բարձրացաւ, եւ սկսաւ դիտել բացատարած դաշտը, իբր թէ աշտարակի մը վրայ ըլլար։ Ընդերկար դիտելէ վերջ, տեսաւ վերջապէս իր ընկերներէն երկուքը, իջաւ բարէն վար, վազեց անոնց մօտ գնաց, քիթը անոնց քիթին քսեց, իբր թէ ըսել ուզեց։

— Շո՛ւտ, ինծի հետ եկէ՛ք, հոն աղէկ բան մը կայ։

Մըջիւնները իսկոյն զացին եւ հունտը փոխադրեցին։

Ինչ որ մէկը առանձինն չի կրցաւ ընել՝ երեքը մէկահաց դիւրութեամբ ըրին յաղթապան՝։

Իրարու օժանդակելու և գեղեցիկ գաղափարը ի վեր կը հանէ նաեւ հետեւեալ պատմութիւնը .

Համեոտ ու անշուք կերպով կահաւորուած փոքրիկ սենեակի մը մէջ կը բնակին այր մը եւ կին մը, իրենց տղան կը բնանայ օրօրոցին մէջ. Դործաւորներու աշխարհ մը օժանդակեց այդ մարդոց. ձարտարապետը զծեց յատակազիծը այդ տունին, քարահանը հողը փորեց հանելու համար պղտիկ քարերը, փայտահար մը անտառին ծառերը կտրեց, կառապան մը զանոնք փոխադրեց, հիւան մը զանոնք միացուց տանիքը կազմելու համար, ատաղձագործը շինեց տախտակամածը, գուռը եւ պատուհանները, ապակեգործ մը պատուհաններուն ապակիները...

Այս երջանիկ ընտանիքը, ահա, գործաւորներու օժանդակութեան առարկայ եղած ընտանիք մըն է :

*
* *

Նոյնիսկ նախապատմական մարդիկ որոնք անտառներու մէջ կը բնակէին մեկուսացած չապրեցան: Հաւարակաց վտանգը եւ զիրար սնուցանելու ու զիրար պաշտպանելու պէտքը զանոնք իրարու մօտ բերած էր: Իրերաօգնութիւնը ընկերութեան հիմնաքարն է:

Բնութիւնը ցոյց կուտայ որ կենդանիները անդադար իրարու հետ կը կռուին եւ այդ է իրենց վայրենութիւնը: Մինչդեռ մարդոց միութիւնը հասարակաց նպատակներու համար կը կազմէ իրենց զօրութեան եւ ազնուութեան ապացոյցը:

Մարդիկ վաղուց հասկնալով միութեան օգտակարութիւնը, սկսած էին շէնքի մը քարերուն պէս զիրար պաշտպանել: Մարդիկ անպայման իրարմէ կախում ունին եւ իրարու համերաշխ են: Կեանքի բոլոր գործառնութեանց մէջ փոխադարձ ծառայութիւններ կը տեսնուին, որոնց շնորհիւ ձեռք կը բերուի նիւթական յառաջդիմութիւն:

Մարդիկ իրարմէ կախում ունին նաեւ բարոյական տեսակէտով, թէ՛ փոխադարձ խորհրդատուութեամբ եւ թէ խրատներով: Մարդիկ կը ջանան իրարմէ ընդօրինակել լաւ գործերը, անոնք ազնիւ զգացումներ կը փոխանակեն իրարու խօսքով եւ գործով:

Իւրաքանչիւր անհատի շահը կը պահանջէ որ իրարու օգնենք, որովհետեւ ասով հասարակաց բարւոյն սատարած կ'ըլլանք. փեթակին նպաստաւորութենէն մեղուներն ալ նպաստաւորուած կ'ըլլան: Երբ հանրութեան օգտակար ըլլալ ջանանք, անհատական շահ ձեռք բերած կ'ըլլանք:

Այս տեսակէտով է որ նուիրական յարգանք պարտինք ցոյց տալ անոնց որոնք մեռան մեր աղատութեան, մեր պատիւին եւ մեր ինչքերուն պահպանմանը համար: Այս տեսակէտով, այսինքն հանրութեան շահը նկատողութեան առնելով է նաեւ որ մենք պարտքեր ունինք անոնց նկատմամբ, որոնք մենէ հեռացան առ յաւէտ, առանց վայելելու իրենց աշխատութեանց պտուղը: Եթէ ուրիշները սիրենք այդ կերպով ուրիշներու կողմէ մեզ հանդէպ սէր ստեղծած կ'ըլլանք:

ԿԵՆԴԱՆՈՒՄԱՆԱԿԱՆ

ՎԱԳՐԸ

Վազրը գրեթէ առիւծին խոշորութիւնը ունի, սակայն անկէ աւելի նուրբ է և հասակով աւելի ցած: Գլուխը, առիւծին գլխուն բաղդատմամբ, աւելի փոքր և կլոր է ու պոչը երկայն:

Վազրը Ասիոյ հարաւային երկիրներուն, ինչպէս նաեւ Ճափա, Սումաթրա, Ֆլորէն, Թիմոր և Սումաթրա կղզիներուն մէջ կ'ապրի: Իր սաստիկ ուժով և կատաղի բնութիւնով ահ ու սարսափ կը սփռէ իր ապրած վայրերուն մէջ: Իր թագստոցը կ'ընտրէ սովորաբար գիւղերու շրջակայ մացառները, ուր անվտանգ կըրնայ առատ ու այլազան սնունդ մը հայթայթել, ինչպէս գոմէշ, եղ, խոզ, շուն և հաւազգի թռչուններ, առանց հաշուելու այն գիւղացիները զորս կ'որսայ իրենց խրճիթին մէջ:

Վազրը չունի այն բացառիկ արագաշարժութիւնը, զոր կարգ մը հեղինակներ կ'ուզեն բարեմտաբար իրեն վերագրել: Հազիւ կրնայ ցատկել 5 մէթր հեռաւորութենէ մը, և հակառակ իր առջեւի անդամներուն արտակարգ ուժին՝ չկրնար վայրկենապէս զգեստնել բարձրահասակ կենդանի մը կամ թաթի մէկ հարուածով սպաննել եղ մը, այծ մը կամ յամայր մը:

Վազրը նախ կը յարձակի իր զոհին ծոծրակին վրայ ու կը խած-

նէ զայն, միւս կողմէ թաթերով կը բռնէ և յանկարծական ոլորուն շարժումով մը կը խորտակէ անոր վիզը: Հակառակ կարգ մը մարդոց յայտարարութեան՝ հաստատուած է թէ վազրը իր զոհին արիւնը բնաւ չծծեր: Իր որսը զգեստնելէ ետք, սովորաբար իր վիճակին մէջ կը ձգէ զայն: Արեւի մայրամուտէն վերջ կրկին զոհը փնտռելու կ'ելլէ և անոր դիակը մեկուսի վայր մը տանելով, անվրդով ու անխռով կը լափլիզէ զայն: Վազրը մէկ գիշերուան մէջ կրնայ մինչեւ 40 քիլօ որսի միտ ուտել: Մարդու վրայ ալ յաճախ կը յարձակի. աներկիւղ կը մանէ գիւղերու մէջ ու հոն անպաշտպան խեղճ գիւղացիները իրենց սուկներէն կորզելով, անյագաբար կ'ուտէ: Ասոր հակառակ, զինեալ որսորդներու առջեւ ամօթահար կ'ընկրկի և երբեմն փախուստ կուտայ, սակայն պէտք չէ միշտ անոր նահանջին վստահիլ, որովհետեւ բարկութեան նոպայի մէջ վազրը անգութ է և ամենի ու անողորմ հակառակորդ մը՝ մարդուն:

Վազրը ընդունակ է ընտանեանալու և լաւ վերաբերում մը ունի զինքը կերակրողներուն հանդէպ, սակայն առիւծէն աւելի կասկածոտ, նենգամիտ ու անհաւատարիմ է:

Իր մորթը շատ յարգի է և լաւագոյն մուշտակ կը հայթայթէ մուշտակավաճառներուն:

ՀՐԱԶԵԱՅ ՏԷՐ-ՈՍԿԻ

ՈՉ-ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱԶԴԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ԱՓՐԻԿԷԻ ԽՍՓՇԻԿՆԵՐՆ ՈՒ ՍԵՒԵՐՐ



Պաշտօն մեռելներու եւ մարդկային զոհներու. — Երեւումներ կամ ուրուականներ. — Քեսայի սարը բնակող ոգին. — Ոգիներու Բնականացները. — Ոգիները ինչպե՞ս կ'ողոփեն խափշիկները. — Բարի եւ չար ոգիներ. — Տահումեյի իմաստը:

ՊԱՇՏՈՆ ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՒ . — Մարդկային էակին վերջամասցութեան գաղափարը կը տիրէ դրեթէ բոլոր ոչ-քաղաքակիրթ ժողովուրդներու մէջ. այդ պատճառաւ մեռելներու հետ կը թագեն կերակուր, ըմպելի, գէնք եւ գործինք. վասնզի կը հաւատան թէ այդ ամէնուն պէտք ունի մեռեալը իր նոր կեանքին մէջ: Ոչ-քաղաքակիրթ ժողովուրդներուն մէջ եւս մեռելներուն մարմինները խնամքի առարկայ են իբրեւ ոգիներու բնակարան: Խափշիկ եւ սեւ ժողովուրդներուն մեծագոյն մասը ի նպատակ մեռելներու կենդանիներ կը զոհէ եւ զոհերու արիւնը գերեզմաններու վրայ կը հեղու կենդանացնելու համար հոգիները(*): Խափշիկները կը խորհին թէ խողխողուած կենդանիները մեռեալին պիտի մատուցանեն այն ծառայութիւնը, զոր կը մատուցանէին երկրի վրայ: Այս գաղափարով էր որ անշուշտ

(*) Այս գաղափարը ունէին նաեւ Յոյները:

մեռած թագաւորներու ի պատիւ պաշտօնական զոհերէ զատ կամաւոր մարդկեղէն զոհեր եւս տեղի կ'ունենային (*): Խափշիկներէն, Աշանթիները, մարդկային զոհեր կը շռայլէին իրենց վազեմի թագաւորներու պաշտամունքին:

Մարդկային զոհերու նուիրումի պահուն տարին անգամ մը Գումասիոյ, Տահումեյի մէջ մանաւանդ, նստարաններու վրայ կը դնեն թագաւորներու կմախքները որոնց ոսկորները ոսկի թելերով իրարու զօղուած են: Թագաւորը անձամբ կուգայ անոնց մատուցանել տասը ոչխարներու արիւնը եւ յատկապէս պատրաստուած կերակուրներ: Այդ միջոցին շատ մը մարդիկ կը զոհուին դարձեալ եւ թագաւորը այդ եղկելիներուն արիւնովը կը լուայ այդ կմախքները:

ԵՐԵՒՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ . — Ափրիկէի սեւերը կը հաւատան թէ մեռելները դարձ կ'առնեն: Սեւերը կը կարծեն թէ մեռելները՝ ողջերը իրենց քաշելու տենջ մը կը կրեն. անոնք կը ներկայանան նախ երազի մէջ եւ ցորեկը ու է անասունի մը՝ կապիկի, կոկորդիլոսի կամ օձի կեր-

(*) Այս կրօնական համոզումով էր որ անշուշտ Հայոց թագաւոր Արտաշէսի մահուան ատեն կիներ, հարձեր եւ մտերիմ ծառաներ կամաւորապէս ինքզինքնին զոհեցին:

պարանքով : Իսկ եթէ մէկը զանց
առնէ իր մերձաւորներուն մեռե-
լայթի պահանջած խնամքը , կամ
որոշեալ ժամանակի մէջ չի տանի
անոնց զերեզմաններու վրայ սո-
վորական կերակուրը և ըմպելին
անոնց վրէժխնդրութեան առար-
կայ ըլլալու կ'ենթարկուի : Խափ-
շիկներէն շատեր երկար ճամբոր-
դութիւններ կ'ընեն հեռու տեղ
մեռնող իրենց ծնողներու ոգիներ
ուն մեծարանքներ ընծայելու հա-
մար :

ՔԵՍԱՅԻ ՍԱՐԸ . — Խափշիկը
ինչպէս ըսինք ամենուրեք ոգիներ
կը տեսնէ , անտառներուն , լեռ-
ներուն , գետերուն , աղբերակ-
ներուն և դաշտերուն մէջ : Եթէ
առարկայ մը իր երեւակայու-
թեանը ազդէ , ան անմիջապէս
ո՛ր և է ոգիի մը բնակավայր կը
համարի զայն : Այսպէս Նիգէրի
մէջտեղ 300 ոտք բարձրութեամբ
արձանացած ժայռը՝ Քեսայի սա-
րը՝ որ կ'ամբառնայ անտառա-
խիտ կղզիի մը ծոցէն՝ բնակարան
է բարեսիրտ ոգիի մը՝ ճամբորդ-
ներու պաշտպանի մը : Երբ անգամ
մը անգլիական շոգենաւ մը շրջա-
կայ ժայռերուն վրայ խորտակուե-
ցաւ , բնիկները յայտարարեցին
թէ ժայռին ոգին սրտմտած էր
անշուշտ անգլիացի պարոններու
դէմ՝ որոնք կարմիր հագուստով
անոր առջեւէն անցնելու անխո-
հեմութիւնը ունեցած էին , վասն
զի այդ ոգին կը խորշի , կը գար-
շի կարմիրէն :

Խափշիկներուն համար ճեր-

մակը մեռեալ ոգիներու գոյնն է ,
իսկ կարմիրը սուգի , վիշտերու
և անէծքներու չարագուշակ
գոյնն է :

Պէտք է գիտնալ նաեւ թէ
Խափշիկը՝ որ ժայռերը , փապար-
եալ ծառերը , սարերը , քարայր-
ները , գետերը եւ այլն ոգիներու
բնակարան կը համարի , չանցնիր
անոնց առջեւէն առանց բան մը ,
տերեւ մը , խեցի մը և այլն թող-
լու , իբր հաւաստիք մեծարանքի :
Խափշիկը ճամբորդութեան սկսելէ
առաջ գետնէն քար մը կ'առնէ ,
քանի մը բառեր կը մըմնջէ , կը
թքնէ քարին վրայ և երեքկնե-
լով այդ արարողութիւնը բոլոր
ուժով գէպի առաջ կը նետէ
զայն , ճամբուն վրայ գտնուող
թէ՛ բարի և թէ՛ չար ոգիները
ողոքելու համար :

ԲԱՐԻ ԵՒ ՉԱՐ ՈԳԻՆԵՐ . —
Սեւին կրօնական գաղափարին
մէջ տեսակ մը երկարմատեան
վարդապետութիւն կայ : Այսպէս
Ափրիկէի հարաւային գաւառնե-
րէն Լօանկոյի մէջ Օմպվիրիները
(պահապան հրեշտակ) և Օճիամ-
պէները (դեւ) կը ներկայացնեն
ոգիներու երկու դաս , մին բարի
և միւր չար : Խափշիկները գրե-
թէ չեն համարձակիր չար ոգի-
ներու անունը արտասանել , վախ-
նալով որ անոնց ուշադրութիւնը
կը հրաւիրեն : Ամէն մէկ խափշիկ
ունի իր Օմպվիրին , պաշտպան ո-
գին՝ և իր հիւղակին մօտ կը շի-
նէ ի յարգանս անոր խղիկ մը :

Այդ ոգին է որ կը պահէ իր

կեանքը, այդ պատճառաւ խափ-
շիկը՝ ինչպէս նաեւ արարը կը
դժուարի իի տարիքը ըսելու, որ-
պէսզի չվշտացնէ կենդանաձի՛ր
զօրութիւնը: Նրբ կը հարցուի եռ-
լոֆի մը թէ ինչպէ՛ս է իր ընտա-
նիքը, միշտ կը պատասխանէ «չատ-
լաւ», սինչեւ իսկ եթէ հիւանդ
ուենայ տան մէջ, վասնզի հա-
կառակ պատասխան մը կրնայ
վշտացնել ընտանեաց ոգին: Իսկ
հաշտեցնելու համար չար ոգիները,
որոնք ընդհանրապէս ստորերկրեայ
կը համարուին, խողխողեալ զո-
հերու վրայ կը հաստատեն թա-
գաւորներու և պետերու բնակա-
րաններու հիմերը: Այս օրինակ
սովորութեամբ մը առած է Տա-
հումկ իր անունը՝ որ կը նշանակէ
«Տաի որովայնը»: Կ'ըսուի թէ
այդ երկրին իշխանը իր արքու-
նիքին իբրեւ հիմնաքար թաղել
տուած է Տա թագաւորին դիակը,
փորը բանալէն յետոյ: Աւելի
գարշելի սնապաշտութիւններ կան.
Լազոսի մէջ, ամէն տարի ողջ ողջ
ցիցի վրայ կ'անցընեն մատաղատի
աղջիկ մը ստորերկրեայ ոգիներէն
առատ հունձքի շնորհ մը ստա-
նալու համար և Պէնինի մէջ, երեք
տարին անգամ մը, միւսնոյն նպա-
տակով, հողի պաշտպան աստու-
ծոյն՝ Յուեուի՝ կը զոհեն տեղւոյն
դեղեցկագոյն աղջիկը:

Նորահաս Ընթերցասէ՛ր,

Գրադարանիդ զարդը աւել-
ցուր թէոդիկի «Ամենուն Տարե»-
ցոյց»ովը: Ըմբոշանէ անոր մա-
նանան: Բայց աւելի մենտոր ըրէ
քեզ թէոդիկի աշխատանքի ոճը:
Ժամանակակից ակումբն է այդ
մարդը: Իեզ որակելու այս ոճին
ներողամիտ եղիր բարեկամս:

Մ. ՍՈՒՐԵԱՆ

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԹԻԻ 60

Բերանս չէ փափուկ այլ երկայն,
Աչքերս բերնիս է յենարան,
Ակռաներ չունիմ ես միշտ հասու
կը տեսնեմ դործ աշխատող մարդու:
Մասն մինչեւ աչքերս չի խօթեա,
Բերանս չի բացուիր որ գործդ
տեսնես:

ՎԱՀՐԱՄ ՄՈՄՃԵԱՆ

ԹԻԻ 61

Առաջինս է խաղ մը հաճելի,
Իսկ երկրորդս մեծ դեր մը ունի,
Ամբողջս է մի անուն
Հայկական և սիրուն:

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԼՈՒԹՈՒՄ

«Առաւօտ» հանդէսի 27րդ թի-
ւին 56 թիւ հանելուկին լու-
ծումն է՝

ԻՒՐ որուն գլուխ մը տրուելով
կ'ըլլայ ԹԻԻՐ, այս վերջնոյն պոչը
կտրելով կ'ըլլայ ԹԻԻ:

Դարձեալ 27րդ թիւին 57 թիւ
հանելուկին լուծումն է ԳԵՐԵԶ-
ՄԱՆ, ԳԵՐ—ԵԶ—ՄԱՆ:

Իսկ 28րդ թիւին 58 թիւ հա-
նելուկին լուծումն է՝

Կ

Կ Ա Թ

Կ Ա Ր Ա Գ

Թ Ա Ն

Գ

Նմանապէս 28րդ թիւին 59
թիւ հանելուկին լուծումն է
ՆԱՐՏ (թավլու):

ԼՈՒԹՈՂՆԵՐ.— 59 թիւ հա-
նելուկը լուծեց Օր. Տիգրանուհի
Ժամկոչեան, Սկիւտարէն. 58 թիւ
հանելուկը լուծեց Պէշիկթաշի
Մաքրուհեան վարժարանի աշա-
կերաներէն Պ. Արահամ Յ. Մի-
քայէլեան:

ԻՄԱՅԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆ. — ԶԳԱՑՈՂՈՒԹԻՒՆ. — ԸՄԲՈՆՈՂՈՒԹԻՒՆ

1. ԶԳԱՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ. —

Ծանօթութիւնները զգացողութիւններու միջոցաւ ձեռք կը բերենք: Ու է արտաքին առարկայի մը ազդեցութենէն առաջ կամ գիտակցութեան եղանակաւորումը կը կաշուի զգացողութիւն (sensation): Երբ մէկու մը մօրթին մէջ խօթեն ասեղ մը, — որ է արտաքին առարկային ազդեցութիւնը, կամ բնախօսական երեւոյթ, — մարդը գիտակցութեան մէջ պիտի զգայ առաւել կամ նուազ զօրաւոր անհաճոյ եղանակաւորում մը որ է իսկապէս զգացողութիւնը, խայթումի զգացողութիւնը որ հոգեբանական երեւոյթ մըն է և որ նախընթաց երեւոյթին հետեւանքը եղող գիտակցութեան մէկ եղանակաւորումն է:

Զգացողութիւնը կը պարունակէ գլխաւորապար իրերայաջորդապէս միաժամանակ արտադրուող երբ երեւոյթներ, որոնք սակայն ըստ էութեան և ըստ ծագման իրարմէ տարբեր են:

Ա. Տպաւորութիւն. — Այն երեւոյթը որ կ'արտադրուի արտաքին առարկային կամ ազդակին և մեծ մարմինին ու է մէկ մասին հաւմովը, կարելի է անուանել

տպաւորութիւն (impression) կամ գրգռութիւն (excitation) որ գործարաններուն մէկ վիճակն է և ոչ թէ վիճակը գիտակցութեան: Այս երեւոյթը բնաւ հոգեբանական բնոյթ չունի, այլ բնախօսական է և բնական: Օրինակի համար ձայն մը երբ ականջին հասնի, հոն առաջ կուգան այն թրթռումները, ինչ թրթռումներ որ յառաջ կուգան երբ թմբուկի մը կամ ջութակի մը թելին զարնենք: Նմանապէս երբ աչքին հանդիպի լոյս մը, յառաջ կուգայ այն երեւոյթը, որ յառաջ կուգայ երբ լուսանկարչատան մը խաւարին սենեակին մէջ ժելատին պրօմիլոյ ծածկուած լուսանկարի բլաթին վրայ լոյս մը իյնայ:

Տպաւորութեան մէջ կարելի է զատորոշել երեք մաս կամ պահ, տպաւորութիւն կազմախօսական, տպաւորութիւն ջղային, տպաւորութիւն ուղեղային: Այսպէս ասեղի օրինակին մէջ, մօրթին և մկանային նեարդներուն վրայ, ասեղի ծայրով յառաջ եկած վէրքը կը կազմէ կազմախօսական տպաւորութիւնը, և այն հոսանքը որ կ'անցնի ջիղին շրջաբեր ծայրէն. վէրքին գրգռեալ կէտէն սկսելով, մինչեւ ջիղին կեղբոնին

ծայրը կը կազմէ ջղային տպաւորութիւնը, իսկ այն եղանակաւորումը որ ցարդ անծանօթ մնացած է և որ տեղի կ'ունենայ ուղեղի կեդրոններուն մէջ կը կազմէ ուղեղային տպաւորութիւնը:

Այս երեք երեւոյթները սակայն կը կազմեն միայն և միայն մէկ երեւոյթ կամ կը ներկայացնեն միեւնոյն շարժումը, որ կը շարունակուի իրարմէ առաւել կամ նուազ երեք տարբեր միջաւայրերու մէջ:

Բ. Զգացողութիւն. — Ամէն անգամ որ մեր գործարաններուն, ջիւղերուն և ուղեղին մէջ տպաւորութիւն մը կը յայտնուի, բան մը կը զգանք կամ մեր գիտակցութեան մէջ բան մը ի յայտ կուգայ, այս զգացածնիս կամ այս ի յայտ եկածը կը կոչուի զգացողութիւն: Այսպէս շօշափելիքով կը զգանք կամ մեր գիտակցութեան մէջ կը յայտնուի, պաղը, տաքը, խաղաղում, կծում, կտրուածք, խայթուածք. հոտոտելիքով կը զգանք հաճոյ կամ անհաճոյ հոտեր. տեսանելիքով կը զգանք լոյսը, մութը, կարմիրը, դեղինը և այլն. լսելիքով՝ աղմուկ, ձայն և այլն:

Հոս հարկ կը տեսնենք անգամ մըն ալ կրկնելու թէ՛ տպաւորութիւնը բնախօսական է, իսկ զգացողութիւնը հոգեբանական երեւոյթներու աստիճանացոյցին վրայ կը գտնուի և գիտակցութեան կը վերաբերի:

Զգացողութեան մէջ ևս կրնանք

զատորոշել երկու երեւոյթներ, որոնք իրարու անբաժանելիօրէն միացած են, մին զգածական (affectif), իսկ միւսը ներկայացուցչական (representatif) երեւոյթ:

Մէկ կողմէ ամէն զգացողութիւն մինչեւ աստիճան մը հաճելի կամ տաժանելի է կամ կըրնայ ըլլալ: Հաճոյքի կամ վշտի այս ձեւը կամ կերպը անոր զգածական դէմքն է. միւս կողմէ ամէն զգացողութիւն հաճելի կամ տաժանելի ըլլալու հանգամանքէն զատ ինքնայատուկ կամ մասնաւոր դիմագիծ մ'է, որով ուրիշներէն կը կը զանազանուի և մեզի կը ճանչցնէ այն արտաքին առարկան, ուրկէ ինք յառաջ եկաւ. օրինակի համար վարդի հոտը ունի իրեն յատուկ բան մը, որով կը զանազանուի մանուշակի հոտի զգացողութենէ:

Ահա այս բանին մէջ կը կայանայ զգացողութեան ներկայացուցչական դէմքը: Զգացողութիւնը, իր զգածական դէմքովը կամ կողմովը, զմեզ կամ կը յաշէ կամ կը վանէ. ան մեր բնագական և շարժիչ գործունէութիւնը գործի գլուխ կը տաի: Զգացողութիւնը իր ներկայացուցչական դէմքով կամ կամով մեզ կ'օժանդակէ ճանչնալ և ատորոշել արտաքին առարկաներ. ան գործի գլուխ կ'անցնէ՝ երիմացական գործունէութիւնը

Երբ երկու մարդ միեւնոյն ժամանակ մտնեն քիմիսան աշխատանոց մը՝ ուր սիրտ խո-

նող կազմը կը պատրաստուէր քիչ առաջ, եթէ անոնց մին գոչէ՝ «օհ, որչափ գէշ կը հոտի» և եթէ միւսը յարէ՝ «այո, հոս ծածմբաւոր ջրածին կը հոտի», երկուքն ալ հոտի միեւնոյն զգացողութիւնը ունեցան, բայց առաջինը զայն նկատեց կամ զգաց զգացողութեան զգածական կողմովը, իսկ երկրորդը զգացողութեան ներկայացուցչական դէմքովը կամ կողմովը:

2. ԸՄԲՈՆՈՂՈՒԹԻՒՆ.— Զգացողութեան կ'ընկերանայ երեւոյթ մը եւս, որ ոչ միայն հոգեբանական է, այլ նաեւ իմացական, որ կը կոչուի ըմբոնողութիւն (perception), որուն պաշտօնն է ճանչնալ կամ վերաճանաչել այն առարկան, ուրկէ առաջ եկաւ զգացողութիւնը: Ինչպէս կ'երեւի զգացողութիւնը իր ներկայացուցչական դէմքովն է որ կը գրգռէ ըմբոնողութիւնը:


Բայց ինչպէս որ զգացողութիւնը պարզապէս ներքին պարզ եղանակաւորում մըն է, ըմբոնողութիւնն ալ այն դատաստանն է որով այս եղանակաւորումին իբրեւ պատճառ կը վերագրենք արտաքին առարկան: Այսպէս ձայն մը լսելը զգալ է, բայց դատել թէ լսուածը ջութակի ձայն է, ըմբոնել է:

2. ԶԳԱՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.— Ամէն զգացողութիւն, ունենալով իբր անմիջական պատճառ ջղային գրգռում մը, ուղեղին կը փոխանցուի: Կրնայ

ըլլալ որ այդ գրգռումը ծագի նոյն իսկ գործարանին մէջ իսկ. օրինակ, մկանային կծկումները, հազի նոպայ մը այդ պարագային զգացողութիւնը ներքին է. այսպէս ներքին զգացողութիւններ են աօթութիւն, ծարաւ, գլխացաւ, երբեմն ալ կրնայ ըլլալ որ գրգռումը արտաքին առարկայէ մը սկսած շարժումին շարունակութիւնը ըլլայ, այն ատեն զգացողութիւնը արտաքին է:

Հինգ զգայարաններու զգացողութիւնները արտաքին են և զգածական են:


Ներքին զգացողութիւնները, որոնք յաճախ կը կոչուին կենսային կամ գործարանական, ներկայացուցչական են:



ՕՐ. ՕՆՕՐԻՆ ԳՐԻՐԷՆ ԵՒ Պ. ՄԻՀՐԱՆ ՀԱԼԱՃԵԱՆ. Խօսեցեալ

19 Դեկտ. 1920 Կ. Պոլիս

Մեր խնդակցութիւնները եւ ճնորհաւորութիւնները:



ՍՏԱՑԱՆՔ ԲՐԷՄ-ՍԻՄՈՆԻ ՏԱՅԻ ԿԱՐԱՊԵՏ կամ ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՓԵՍՏԱՑՈՒՆ կատակերգութիւնը երեք արար: Գրուած Սամաթիացիական և Գուժ-Գարուցիական լեզուով: Կաղանդի միակ և յարմարագոյն նուէրը: Գին 25 դհ.: Կը գտնուի լրագրավաճառներուն մօտ:

ՍՏԱՑԱՆՔ ՍՕՍ-ՎԱՆԻ Հայկական Այբենարանը՝ զարդարուած բազմաթիւ պատկերներով և Հայաստանի քարտէսով: Գին 15 դհ.:

ՎԵՐԻՐԵԹԻՆ

ՊԶՏԻԿ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ

ՅՈՎԱԼԵՓ ՔՐԻՋԷ

11 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԿԱՆ ԳԵՐԻՆ

Ա. — ՊՐԱՆՏԷՆ ՊՈՒՐԿՑԻՆԵՐՈՒՆ ԶՕՐԱՆՑԲԸ

1914/ին, օգոստոսի առաւօտ
մը, քսանի չափ զինուորներ, նի-
զակները ձեռքերնին կը դեգե-
րէին փողոցներուն մէջ և իրենց
շէկ մօրուքներուն մէջէն խիստ
հրամաններ կ'արձակէին.

«Տուն գացէ՛ք... դռներ բա-
ցէ՛ք... պատուհանները գոցե-
ցէ՛ք...»

Այն ծերերը որոնք կը յամե-
նային փողոցներէն քաշուիլ, նի-
զակներու ծայրով կը խթանուէին:

Իւհլաններուն կը հետեւէին
Սաքսոնները, որոնք կանոնաւո-
րապէս կը կողոպտէին: Շատ լաւ
էր իրենց համար ճարպը, վառ-
եակը և ոչխարը:

Սպանները, պուրժուականներուն
մառաններէն բերել կուտային
Պուրկոնների գինիները:

Դինի և խնձորեղէն կը բաւէր
այս մարդոց:

Երբ քաղաքին ուտելիքը սպա-
ռեցաւ, Գերմանացիները առանց
կենալու անցան գացին, գոչելով.

«Դէպի Բարիզ, դէպի Բարիզ:»

Եւ ալիքը կը քալէր անսպա-
ռելի սղթիւրի մը պէս:

Օգոստոսի վերջին կիրակին,

Պրանտպուրկեան րանակաթեւ մը
երեք օր հանգստանալու համար
եկաւ հաստատուիլ:

Երկուշաբթի տեղի պիտի ու-
նենար մեծ զօրանցք մը և նուա-
զածուիլին:

«Գնդապետ Փօն Պիւլլէրի ո-
րոշմամբ քաղաքին բնակիչները
բացառաբար արտօնուեցան
չրջագայելու եւ զօրանցքին ներ-
կայ գտնուելու:

Այս արտօնութենէն ոչ մէկը,
այր թէ կին չօգտուեցաւ:

Բայց տղաքները! 24ի չափ
մանչեր և աղջիկներ, գացին զօ-
րանցքին մօտը, բայց անոնք զօ-
րանցքը դիտելու և նուագը մօիկ
ընելու երեւոյթը չունէին: Անոնց-
մէ ոմանք չռնչան կը դարձնէին,
և ոմանք գնդակ և լընկու կը խա-
ղային:

Գնդապետը տեսնելով որ չա-
փահասներէն ոչ ոք եկած է հիա-
նալու իր կեցուածքին, արծաթ
գլխանոցին և թափը հատանելով
խրխնջող ձիուն վրայ, շատ կը
կատղէր:

Այն պահուն երբ զինուորնե-
րու զրօշակիր խուճըր տղոց առ-
ջեւէն կ'անցնէր, խիստ ձայն մը
պոռայ:

«Տղաքնե՛ր և աղջիկնե՛ր, ուղիղ կանգնեցէ՛ք և բարեւեցէ՛ք:»

Ոչ մէկը իր խաղը չի ձգեց:

Այն ատեն տեղակալ մը՝ մօտենալով ստահակներէն մէկուն որ անկեղծ աչքերով և արթուն դէմքով տղայ մըն էր, անոր պռնաց:

«Օ՛հ, պզտիկ, դուն ալ բարեւէ:»

Միեւնոյն ատեն տղան գլխուն ձեռքի հարուած մը տալով քառքէթը դետին ձգեց:

Տղան ուղղուեցաւ և բարակ բայց կորովի ձայնով մը պատասխանեց.

«Ազատա Պօ՛չ, դուն վատ մըն ես:»

«Զիս կը նախատէ՛, դրօշակը կը նախատէ՛» գռնաց տեղակալը:

«Բռնեցէ՛ք, հրամայեց գնդապետը, որ իսկոյն իր ձին տղուն քով քշած էր, տեղակա՛լ, ահա խարաղանը, անոր մատներուն տառը հատ հարուած տուր, յետոյ կը տեսնուինք:»

Տեղակալ Ուլրիխ զարկաւ անոր տառը հարուած և արիւնը ժայթքեց:

Գնդապետը որ քանի մը վայրկեան լուռ կեցած էր.

Յանկարծ կատաղի նայուածքով մը սկսաւ հարցաքննել տղան.

«Ստահակ, անունդ ի՞նչ է:»

«Յովսէփ Քրիզէ:»

«Իմ պատուանունս տուր, պարոն գնդապետը անուանէ զիս: Ըսէ տեսնեմ քանի՞ տարեկան ես:»

«11 տարեկան, պարոն գնդապետ:»

«Հաղիւ տառ տարեկան կ'երեւայ մըմռաց գնդապետը, ի՞նչ այլասերեալ ցեղ:»

«Դուն գիւղացիի չես նմանիր, ո՛ւր տեղացի ես:»

«Բարիզի եմ, պարոն գնդապետ:»

«Ծնողքդ ի՞նչ կ'ընեն, դուն ի՞նչ կ'ընես:»

— Հայրս երկրագործական նուխարարութեան գրասենեակին մէջ երկրորդ տնօրէն է. երկու տարի առաջ մայրս մեռաւ: Շարլըմաներ լիսէին ճրդ դասարանը դեռ նոր աւարտեցի:

— Քու լիսէիդ մէջ գերմաներէն կը սորվէի՞ր:

— Այո, պարոն գնդապետ, նոյնիսկ գերմաներէնի մրցանակ առի:

— Գերմաներէնի մրցանակ, նայէ, որւոր նայէ, յարեց գնդապետը չահագրգռուած:

Եւ քանի մը վայրկեան մտածելէ վերջ ըսաւ.

— Կանչեցէք Քիւլման անուն զինուորը:

Պրանտէնպուրկցի յազթանդամ զինուոր մը հասաւ շուտ մը: Գնդապետը անոր կարճ հրամաններ տուաւ և զնաց իր գօրաբաժնին գլուխը:

Այսպէս փոքրիկ Յովսէփ միակը մնաց Բրուսիացի խաչօր զինուորին դիմաց:

Ո՛հ, աս ալ երկար չի տեւեց: Քիւլման, անմիջապէս տղան տա-

բաւ խոշոր տուն մը զոր Գերմանացիք զինուորական բանաւի վերածած էին, և ոտքի հարուածով մը մուտ սենեակի մը մէջ նետեց զայն: Սենեակին դուռը տխուր ճրճոցով մը գոցուեցաւ:

Երեկոյին, Քիւման աման մը ապուր բերաւ պղտիկ բանտարկեալին և ըսաւ. «Կեր և անմիջապէս պառկէ, որովհետեւ մինչեւ առաւօտ քնանալու ժամանակ պիտի չկրնաս ունենալ»:

Յովսէփ կերաւ և փռուեցաւ իբրեւ անկողին յարդարուած տախտակներուն վրայ. առաւօտեան ժամը մէկին ոտքի կոպիտ հարուածով մը արթնցաւ:

Քիւման իր առջեւն էր:

— Ոտքի ելիր, կը մեկնինք:

— Ո՞ւր պիտի երթանք, հարցուց աղան ոտքի ելլելով:

— Կը հասկնաս երբոր հասնինք:

Պրանտէնպուրկցի զինուորը աղան կը տանէր քաղաքէն դուրս: Այսպէս գիշերանց Թէրնիէի ճամբան կը բռնեն: Առտուան ժամը 4ին կը հասնին նոյն քաղաքին կայարանը:

Քիւման ածապարանօք զնաց խորհուրդ հարցնել գերմանացի ուլային որ Փրանսացի կայսրանապետին կը փոխանորդէր:

«Լաւ, ըսաւ սպան, երկու ժամէն վակօնը պատրաստ կ'ըլլայ, զնդապետին փափաքին համաձայն կը շինենք վերէն բացուող պատուհանիկ մը: Արդէն ճիշդ այդ նպատակին յարմար

հաստ և յղկուած ապակին ալ ունինք:

Որոշեալ ժամուն Յովսէփ առաջնորդուեցաւ խոշոր վակօնի մը առջեւ, որուն վրայ երկու որոշ հասցէներ ճերմակ ներկով գրած էին՝ մին Փրանսերէն, իսկ միւսը գերմաներէն: Ահա առաջինը:

«Պարոն գնդապետ Ֆոն Պիւլլեր
Պիւլմուսքերի դղեակը
Կայսրան Սթոլբի
Բովիւրանիոյ մէջ
Քիւմանիա»

Վակօնին դուռը կը սահի իր անիւներուն վրայ:

— Օ՛հ, կը մռնչէ Քիւման, հրելով և դառնալով պղտիկ գերիին:

— Ամէն առտու այս վերէն բացուող պատուհանէն պիտի առնես օրական ուտելիքդ:

Ու յարեց բռունցքովը սպաննալով:

— Ջանայ բան մը չխանդարել, ստահակ, ամէն ինչ համարուած և թուագրուած է. եթէ Պիւլմուսքերի մէջ վերաքննութեան պահուն պակաս բան մը ելլէ, կաշիովդ պիտի վճարես:

Երբ դուռը գոցուեցաւ, կըղպուեցաւ ու կնքուեցաւ:

Այն ատեն պատուհանը բացուեցաւ ու ձեռք մը երկարեց ջուրով լեցուն շիշ մը, հազիւ 300 կրամնոց կոշտ մը հաց, պանիրի կտոր մը, աման մը մսի ջուր և գիշերուան անօթ մը: Ինքն իր վրայ բացուող պատուհանը փակուեցաւ: